

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2010-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի N 1302-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետին համապատասխան` Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2010-2014 թվականների գերակայությունները`

- 1) հայազիտություն, հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտություններ,
- 2) գիտություններ կյանքի մասին,
- 3) վերականգնողական էներգետիկա, էներգիայի նոր աղբյուրներ,
- 4) առաջատար տեխնոլոգիաներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- 5) տիեզերքի ուսումնասիրություն, երկրի մասին գիտություններ, խնայողական բնօգտագործում,

6) կարևորագույն կիրառական հետազոտությունները խթանող հիմնարար գիտություններ:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները հաստատելու մասին» N1302-Ն որոշումը:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Արմեն Աշոտյան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
2010-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի N 1302-Ն
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի 1302-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին և ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել է ի կատարումն ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի թիվ 40-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 152-րդ կետի և բխում է «Հայաստանի Հանրապետությունում գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթներից»:

Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները սահմանում են գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, նպատակները և դրանց իրականացման մեխանիզմները:

Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման ներկայում գործող գերակայությունները հաստատվել են ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները հաստատելու մասին N 1302-Ն որոշմամբ: Այժմ անհրաժեշտություն է առաջացել վերասահմանել գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները՝ համապատասխանեցնելով հանրապետության գիտական ներուժի հնարավորություններին և ձեռքբերված արդյունքներին, ինչպես նաև՝ միջազգայնորեն հեռանկարային հանդիսացող գիտահետազոտական ուղղություններին:

Հայազգիությունը, որպես Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական կարևորագույն նշանակության բնագավառ, իր առաջնահերթ տեղը պետք է ունենա գիտության և տեխնիկայի զարգացման գերակայություններում:

Գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները վերասահմանելիս օգտագործվել են՝

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների ձևավորման սկզբունքները և չափանիշները հաստատելու մասին» N 1558-Ն որոշմամբ հաստատված սկզբունքները և չափանիշները,

- Հայաստանի Հանրապետության տնտեսության տարբեր ոլորտների զարգացման ռազմավարությունները և հայեցակարգերը,

- Հայաստանի Հանրապետությունում առկա գիտական ներուժը և ենթակառուցվածքը, իրականացվող գիտական ծրագրերի և թեմաների արդյունքները,

- միջազգային փորձը:

Յուրաքանչյուր գերակայություն ֆորսայթ (գիտատեխնիկական և հասարակական զարգացումների հեռանկարային կանխատեսում՝ հիմնված փորձագետների հարցման վրա) մեթոդաբանությամբ տրոհվելու է առանձին առաջնահերթությունների:

1. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունում գիտության առկա վիճակի, գիտական ներուժի և միջազգային փորձի վերլուծությունը 6 գերակայության ձևակերպման հիմք է հանդիսացել՝

1) հայագիտություն, հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտություններ,
2) գիտություններ կյանքի մասին,
3) վերականգնողական էներգետիկա, էներգիայի նոր աղբյուրներ,
4) առաջատար տեխնոլոգիաներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ,
5) տիեզերքի ուսումնասիրություն, երկրի մասին գիտություններ, ինսյոդական բնօգտագործում,

6) կարևորագույն կիրառական հետազոտությունները խթանող հիմնարար գիտություններ:

Հայագիտություն, հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտություններ

Հայագիտությունը Հայաստանի Հանրապետության քաղաքականության կարևորագույն ռազմավարական ուղղություններից է՝ կոչված պահպանելու հայ ժողովրդի ազգային նկարագիրը և ապահովելու հայրենիք-սփյուռք գիտագործնական սերտ

համագործակցությունը: Հայագիտությունը պետք է ապահովի բարձր մակարդակի գիտական հենք՝ ազգային շահերի միջազգային ճանաչման և պաշտպանության համար: Մասնավորապես, անհրաժեշտ է համակարգային ծրագրի (ծրագրերի) իրականացման շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն դարձնել հայագիտության այնպիսի ոլորտների զարգացմանը՝ ինչպիսիք են ցեղասպանագիտությունը (իրավաբանական և պատմական), պատմական արխիվների ուսումնասիրման համար համապատասխան կադրերի պատրաստումը, հայոց լեզուն, հայ ժողովրդի պատմությունը, ծագումնաբանությունն ու պատմամշակութային ժառանգությունը համաշխարհային հանրությանը ներկայացնելը, հայագիտության բնագավառում միջազգային համագործակցությունը և այլն: Բացի դրանից, անհրաժեշտ է հաշվի առնել, որ հայագիտության բնագավառի գիտական հետազոտությունները կոչված են խթանելու ազգի հոգևոր-մշակութային զարթոնքը, պահպանելու ժողովրդի մշակած դարավոր ավանդույթները և ստեղծած արժեքները, ազգային նկարագիրը:

Հումանիտար և հասարակական գիտությունները առանցքային դեր են խաղում հասարակության, տնտեսության և պետության զարգացման հարցում: Նրանք պետության շարունակականության, ինչպես նաև ազգային ավանդույթների ու մշակութային ժառանգության պահպանման կարևորագույն տարրերն են: Հայ ժողովրդի համար, երբ ազգի մեծամասնությունը բնակվում է հայրենիքից դուրս, հումանիտար և հասարակական գիտություններն ունեն կենսական նշանակություն՝ ազգային ինքնության ու պահպանման հարցում: Միևնույն ժամանակ հումանիտար և հասարակական գիտությունները անփոխարինելի ռեսուրս են հասարակական զարգացումներին նպաստող ռեֆորմների իրականացման համար: Այդ դերն ավելի է կարևորվում արդի ժամանակներում, երբ անհրաժեշտ է բնագավառի վերջին նվաճումներն օգտագործել աշխարհաքաղաքական նոր, այն է՝ տարածաշրջանային և համաշխարհային ինտեգրման պայմաններում պետական և հասարակական նոր քաղաքականության ձևավորման գիտական հենքի ստեղծման համար:

«Հայագիտություն, հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտություններն ուղղությամբ ներկայում իրականացվող հետազոտությունները, կիրառվող եղանակները և դրանց մեթոդաբանությունը, ըստ էության, չեն համապատասխանում արդի գիտության պահանջներին, քիչ են մասնագիտական, հատկապես օտարալեզու հրատարակումները:

Միջազգային գիտատեղեկատվական ցանցում ոլորտը անբավարար մակարդակով է արտացոլված:

Ոլորտի կարևորությունը Հայաստանի Հանրապետության համար պայմանավորված է հիմնականում նոր աշխարհաքաղաքական պայմաններում պետական և հասարակական քաղաքականության գիտական ապահովվածության անհրաժեշտությամբ, ինչը մասնավորապես ներառում է՝

- տարածաշրջանի և հնարավոր գործընկեր երկրների պատմության, մշակույթի, հասարակության և քաղաքականության խորը ուսումնասիրությունը,

- տարածաշրջանի և համաշխարհային զարգացումների համատեքստում Հայաստանի Հանրապետության զարգացման քաղաքականության ռազմավարության պլանավորումը,

- տարածաշրջանի և Եվրամիության հետ ինտեգրման ինտենսիֆիկացիայի պայմաններում համապատասխան քաղաքականության գիտական հենքի ստեղծումը և այլն:

Գիտություններ կյանքի մասին

Կենսաբանության և գենետիկայի բնագավառներում 20-րդ դարի երկրորդ կեսին ձեռք են բերվել նշանակալի գիտական արդյունքներ: Այս հարցում իր սկզբունքային դերակատարումն ունեցավ «Մարդու գենոմե ծրագիրը»: Այդ ծրագրի հաջող իրականացման արդյունքում պարզվեց, որ տարբեր հիվանդությունների ծագումնաբանությունը, ըստ էության, պայմանավորված է ինչպես գենոմային մակարդակի, այնպես էլ բջջի կենսագործունեության մեխանիզմների խախտումներով: Ոլորտն իր նշանակությամբ իրավամբ կարելի է համարել 21-րդ դարի միջդիսցիպլինար նշանակության կարևորագույն ոլորտ, որում իրենց մեծ դերակատարումն ունեն և՛ կենսաբանները, և՛ ֆիզիկոսները, և՛ քիմիկոսները, և՛ բժիշկները, և՛ այլ ոլորտի մասնագետներ: Ոլորտի կարևորագույն ուղղություններից է մոլեկուլային կենսաբժշկությունը: Այն ներմուծում է նոր մոտեցումներ ժամանակակից բժշկության մեջ՝ նպատակ ունենալով բարձրացնել կանխարգելիչ բժշկության, ախտորոշման, թերապիայի, հետևաբար նաև կլինիկական բժշկության որակը և արդյունավետությունը: Ժամանակակից կենսաբժշկության ոլորտի հետազոտություններն իրենց բնույթով բազմակողմանի են, իսկ արդյունքները՝ կիրառելի ինչպես գիտության տարբեր բնագավառներում, այնպես էլ ամենօրյա կյանքում: Միևնույն

ժամանակ, գիտական և հասարակական մեծ ուշադրության են արժանանում գենոմի և սպիտակուցի կառուցվածքի բացահայտման ուղղությամբ իրականացվող հետազոտությունները, որոնք նպատակ ունեն ստեղծելու նոր դեղեր կամ հիվանդությունների դեմ պայքարելու նոր եղանակներ, ինչի պատճառով էլ դրանք նաև այն բնագավառներն են, որտեղ կատարվում են մեծ ֆինանսական ներդրումներ:

«Գիտություններ կյանքի մասինն ոլորտի արագ զարգացող մասն են կազմում կենսաբանական ակտիվ կառույցների սինթեզին, բարձր մաքրության ամինաթթուների հիման վրա արյան արհեստական փոխարինիչ ինֆուզիոն դեղամիջոցների արտադրությանը, վտանգավոր համաճարակային հիվանդությունների (ժանտախտ, խոլերա, տուլյարեմիա, բրուցելոզ և այլն) դեմ կենսատեխնոլոգիական իմունապրեպարատների ստեղծմանն ու արտադրությանը նվիրված կենսատեխնոլոգիական բնույթի հետազոտությունները: Ոլորտի մեկ այլ, արագ զարգացող բնագավառներից է նաև թաղանթաբանությունը, որը համարվում է մոլեկուլային դեղաբանության համար հեռանկարային ոլորտ:

«Գիտություններ կյանքի մասինն ուղղությամբ, մասնավորապես՝ կենսաբանության, կենսատեխնոլոգիայի, կենսաֆիզիկայի, կենսաքիմիայի և այլ բնագավառներում ներկայում իրականացվող մի շարք հետազոտություններ համապատասխանում են միջազգային ամենաբարձր չափանիշներին, և արդյունքները հրատարակվում են հեղինակավոր գիտական պարբերականներում:

Ոլորտի դերն ու նշանակությունը Հայաստանի Հանրապետության համար կարևորվում են դեղագործության, կենսատեխնոլոգիաների, կենսաբժշկական ճարտարագիտության և բժշկական տեխնոլոգիաների, բժշկության նոր մեթոդների և միջոցների մշակման, բնակչության առողջության պահպանման և այլ ասպարեզներում:

Վերականգնողական էներգետիկա, էներգիայի նոր աղբյուրներ

Էներգետիկան ռազմավարական նշանակություն ունի երկրի զարգացման և անվտանգության ապահովման հարցում: Մերօրյա զարգացումները բնորոշվում են բնական պաշարների անհամամասնական բարձր ծախսումների արդյունքում տնտեսության զարգացման ցածր արդյունավետությամբ: Այսօր ժամանակի հրամայական է դարձել էներգետիկ պաշարների, այդ թվում նաև էներգիայի վերականգնվող աղբյուրների լայնածավալ յուրացումը և ներառումը վառելիքաէներգետիկ հաշվեկշռի մեջ:

Հայաստանի Հանրապետությունում, որտեղ բացակայում են արդյունաբերական նշանակության սեփական հանածո վառելիքային պաշարները, կարևորագույն ռազմավարական նշանակություն ունի տնտեսության էներգաարդյունավետության բարձրացումը և վերականգնվող էներգետիկայի տեղական էներգապաշարների զարգացումը:

Այսօր Հայաստանի Հանրապետության տնտեսության էներգետիկ արդյունավետությունը զգալիորեն զիջում է տարածաշրջանի և զարգացած երկրների համանման ցուցանիշին, իսկ մեզանում գործող տեխնոլոգիաները նոր և իդեալական պրոցեսների (տեխնոլոգիաների) համեմատությամբ մի քանի անգամ փոքր օգտակար գործողության գործակից ունեն: Հետևաբար, հանրապետության ներկա և ապագա զարգացումների համար էներգետիկ ապահովվածության բավարարման ոլորտի գերիխնդիրը սեփական աղբյուրների զարգացմամբ էներգետիկ անկախության հնարավոր բարձր աստիճանի ապահովումն է, որը ենթադրում է տնտեսության էներգաարդյունավետության նշանակալի բարձրացում և վերականգնվող էներգաաղբյուրների լայնամասշտաբ կիրառում:

«Վերականգնողական էներգետիկա, էներգիայի նոր աղբյուրներե գերակայությունն առանձնանում է բարձր որակավորում ունեցող գիտական ներուժի և համապատասխան ենթակառուցվածքների առկայությամբ և միջազգային համագործակցության բավականին բարձր մակարդակով: Այս ուղղությամբ իրականացվող գիտական հետազոտությունների զգալի մասը համապատասխանում է միջազգային ամենաբարձր չափանիշներին, ինչը հիմնականում պայմանավորված է հետևյալ գործոններով՝

- ոլորտում ընդգրկված են գիտության այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են ֆիզիկան, քիմիան, կենսաբանությունը, տեխնիկական գիտությունները և այլն, որոնք հանրապետությունում ունեն կայացած գիտական դպրոցներ ու ավանդույթներ, ծավալուն ընդգրկվածություն միջազգային գիտատեխնիկական տարածքին,

- հանրապետությունում առկա է միջազգային մակարդակին համապատասխան միջուկային էներգետիկա:

Ոլորտի դերն ու նշանակությունը Հայաստանի Հանրապետության համար պայմանավորված է էներգետիկ անվտանգության ապահովման, միջուկային էներգետիկայի զարգացման, վերականգնողական էներգիայի աղբյուրների շահագործման,

նոր տեխնոլոգիաների մշակման, էներգասարդյունավետության բարձրացման և հարակից բնագավառների զարգացման անհրաժեշտությամբ:

Առաջատար տեխնոլոգիաներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ

Արդի ժամանակներում առաջատար տեխնոլոգիաները, հատկապես՝ տեղեկատվական, հաղորդակցական տեխնոլոգիաները, ինչպես նաև նանոտեխնոլոգիաները և կենսատեխնոլոգիան, հասարակության զարգացման և առաջընթացի տեսանկյունից համարվում են առավել դինամիկ զարգացող բնագավառներ: Դրանց կիրառությունը սկզբունքային նշանակություն ունի հասարակության և տնտեսության զարգացման այնպիսի նպատակակետերի համար ինչպիսիք են՝ ինովացիոն գործունեությունը և մրցունակությունը: Միևնույն ժամանակ, առաջատար տեխնոլոգիաները իրենց կիրառությամբ միջճյուղային են և, հետևաբար, կազմում են առողջապահության, սեյսմիկ անվտանգության, բնապահպանության, էներգետիկայի և այլ բնագավառների ռազմավարական ծրագրերի անբաժանելի մասը: Առաջատար տեխնոլոգիաների բնագավառում հանրապետությունում արդյունավետորեն իրականացվում են հետազոտություններ նանոգիտության և նանոտեխնոլոգիաների, կենսատեխնոլոգիայի, լազերային տեխնոլոգիաների ուղղությամբ:

Վերջին տասնամյակների ընթացքում պարզ է դարձել, որ տեղեկատվական կապի և հաշվողական համակարգերի օրեցօր աճող պահանջները՝ նրանց հիշողության ծավալի, ազդանշանների վերամշակման և հաղորդման արագության մեծացման ուղղությամբ, կարելի է բավարարել միայն նանոգիտության և նանոտեխնոլոգիաների օգնությամբ: Նանոկառույցները միանգամայն ակտիվորեն ուսումնասիրվում են գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառներում: Ձևավորվել են այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են նանոէլեկտրոնիկան, նանոօպտիկան և նանոքիմիան: Ժամանակակից կիրառական ֆիզիկայի ամենակարևոր խնդիրներից մեկը տեսանելի և ինֆրակարմիր տիրույթի էլեկտրամագնիսական ալիքների տեղադրումն է նանոչափային բնագավառներում: Կասկածից վեր է, որ նանոգիտությունը և նանոտեխնոլոգիաները XXI դարում նոր գիտատեխնիկական հեղափոխություն են անելու և տնտեսության ներդաշնակ զարգացման մեջ ունենալու են մեծ տեսակարար կշիռ:

Կենսատեխնոլոգիայի բնագավառում իրականացվող և տեխնիկական ուղղվածություն ունեցող հետազոտությունները ուղղված են հիմնականում լքված

հանքավայրերից ու թափոններից պղնձի և այլ ծանր ու հազվագյուտ մետաղների ստացման արդյունավետ եղանակների, ոսկու կորզման մանրէաբանական տարալվացման մեթոդների և տեխնոլոգիաների մշակմանը:

Լազերային տեխնոլոգիաների զարգացման բնագավառում հանրապետությունում գիտության, տնտեսության զարգացման, բարձր տեխնոլոգիական սարքավորումների ստեղծման համար կարևորվում են բյուրեղների աճեցման նոր տեխնոլոգիաների մշակումը և ներդրումը, ճառագայթման ալիքի երկարությունների լայն տիրույթում վերալարվող նոր լազերների, բարձր արդյունավետությամբ աշխատող՝ լազերային դիոդներով գրգռվող փոքրածավալ բյուրեղային լազերների, ալիքի տարբեր երկարություններ ճառագայթող հզոր, անընդհատ և իմպուլսային բանելակարգով աշխատող լազերների և լազերային տեխնիկայի տարրերի մշակումը և ստեղծումը:

Առաջատար տեխնոլոգիաների մեջ իրենց զարգացման տեմպերով, ինչպես նաև տնտեսության ու հասարակության վրա ունեցած ազդեցություններով առանձնանում են տեղեկատվական տեխնոլոգիաները: Այդ ոլորտն իրենից ներկայացնում է տեղեկատվություն հավաքող, ձևավորող, տարածող և օգտագործող սուբյեկտների, տեղեկատվության և տեղեկատվական ենթահամակարգերի ամբողջություն, ինչպես նաև այդ գործընթացներում առաջացող հասարակական հարաբերությունների կարգավորման համակարգ: Տեղեկատվական ոլորտը, ունենալով հասարակական կյանքը համակարգող և կարգավորող կարևոր գործառույթ, ակտիվորեն ազդում է երկրի անվտանգության քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ բաղադրիչների վրա: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունն էականորեն կախված է տեղեկատվական անվտանգության ապահովումից, և այդ կախվածությունը մեծանում է գիտատեխնիկական առաջընթացին համընթաց:

Հանրապետության շահերը տեղեկատվական ոլորտում ներառում է համահայկական տեղեկատվական դաշտի ձևավորման, նրա ենթակառուցվածքների ներդաշնակ գործառման ու զարգացման, ինչպես նաև հավասարազոր և փոխշահավետ միջազգային համագործակցության զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

«Առաջատար տեխնոլոգիաներ, տեղեկատվական տեխնոլոգիաներն ուղղության տեղեկատվական տեխնոլոգիաներ մասն առանձնանում է իրականացվող գիտական մշակումների բարձր մակարդակով, միջազգային կառույցների հետ ինտեգրման և

մասնավոր բիզնեսի ներգրավման համեմատաբար բարձր աստիճանով: Բացի դրանից, մատչելի են բարձր մակարդակի գիտական ռեսուրսները և բարձր է բուհերի ուսանողների հետաքրքրությունը ուղղության նկատմամբ: Ինչ վերաբերում է նանոտեխնոլոգիաներին, ապա այդ ուղղությամբ արդեն իսկ նախատեսված է մի շարք միջազգային նախագծերի ու ծրագրերի իրականացում: Ոլորտում ներկայում կատարվող հետազոտություններում ընդգրկված են գիտության այնպիսի բանգավառներ, ինչպիսիք են ֆիզիկան, քիմիան, կենսաբանությունը, տեխնիկական գիտությունները և այլն:

Ոլորտի դերն ու նշանակությունը Հայաստանի Հանրապետության համար պայմանավորված է տնտեսության մեջ առաջատար, այդ թվում նաև տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման և միջազգային փոխշահավետ համագործակցության զարգացման անհրաժեշտության տեսանկյունից: Ոլորտում ընդգրկված կազմակերպությունների առաջնահերթ խնդիրն է նաև Հայաստանի Հանրապետության մատենագիր ժառանգության, գիտատեխնիկական տեղեկատվության և գրադարանների նյութերի թվայնացումը, ներհանրապետական միասնական գիտատեղեկատվական ցանցի ստեղծումը, ինտեգրումը՝ միջազգային գիտատեղեկատվական ցանցում, հայ ժողովրդի պատմական և մշակութային արժեքները համացանցում պատշաճ մակարդակով ներկայացնելը և այլն:

Տիեզերքի ուսումնասիրություն, երկրի մասին գիտություններ, խնայողական բնօգտագործում

Տիեզերքի կառուցվածքին և զարգացման օրինաչափություններին նվիրված հետազոտությունները Հայաստանի Հանրապետությունում ունեն ձևավորված և կայացած ավանդույթներ: Մեծ է հայ գիտնականների ներդրումը, մասնավորապես՝ ակտիվ գալակտիկաների, երիտասարդ աստղերի և դրանց հետ կապված անկայուն երևույթների ուսումնասիրություններում: Ներկայում տիեզերքի մասին գիտությունների բնագավառում բուն վերելք է ապրում բարձր էներգիաների աստղաֆիզիկան, որի հետազոտությունների առարկան աստղաֆիզիկական աղբյուրներում տեղի ունեցող ոչ ջերմային երևույթների ուսումնասիրությունն է: Նշված հոտազոտությունների խթանումը կնպաստի նաև հանրապետությունում գիտական սարքաշինության, մասնավորապես օպտիկական և էլեկտրոնային սարքաշինության զարգացմանը:

Երկրի մասին գիտությունների շարքում առանձնանում են հետազոտություններ, որոնք կատարվում են հանրապետության համար ռազմավարական նշանակություն

ունեցող այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են օգտակար հանածոների շահագործումը, լեռնահանքային արդյունաբերության, բնական, հատկապես անտառային և ջրային պաշարների օգտագործման արդյունավետ եղանակների մշակումը, երկրաբանությունը, երկրաբանական վտանգավոր երևույթների (երկրաշարժեր, սողանքներ, սելավներ, հրաբուխներ և այլն) կանխատեսման և դրանց դեմ պայքարի միջոցառումների մշակմանը նվիրված ուսումնասիրությունները:

Ներկայում բնապահպանական խնդիրներն ու բնապահպանական անվտանգությունը ցանկացած երկրի և տարածաշրջանի տնտեսական զարգացման կարևորագույն գործոններ են: Մեր երկրի պարագայում բնական ռեսուրսների և հանածոների սակավությունը, ինչպես նաև բնական պաշարների պահպանման և մաքուր տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման, բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավման հիմնահարցերը ռացիոնալ բնօգտագործման հետ կապված խնդիրները դարձնում են առավել կարևոր:

«Տիեզերքի ուսումնասիրություն, երկրի մասին գիտություններ, խնայողական բնօգտագործումե ուղղությամբ ներկայում իրականացվող հետազոտությունների մեջ քիչ չեն միջազգային մակարդակին համապատասխանող աշխատանքները, մասնավորապես՝ ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, երկրաբանության և այլ բնագավառներում, առկա է միջազգային համագործակցությունը: Սակայն, անբավարար մակարդակի է շրջակա միջավայրի պահպանման տեխնոլոգիաների մշակումը, բնական ռեսուրսների օգտագործումն ու ներմուծված տեխնոլոգիաների կամ արտադրությունների շահագործումը չի ուղեկցվում անհրաժեշտ գիտական հիմնավորմամբ, հնարավոր հետևանքների գնահատմամբ և գործունեության նկատմամբ մշտական գիտական մոնիթորինգով, թույլ է ոլորտում ներգրավված գիտական կազմակերպությունների և տնտեսվարող սուբյեկտների կապը և այլն:

Բնապահպանական անվտանգության տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն Սևանա լճի պահպանումն ու դրա պաշարների գրազետ օգտագործումը: Կարևորագույն նպատակներից են՝ հանրապետության բնական միջավայրի գիտական մոնիթորինգը, կենսաբազմազանության պահպանումը, բնապահպանական տեսակետից անվտանգ տեխնոլոգիաների մշակումը, բնության պահպանության տեխնոլոգիաների ստեղծման ու մշակման աշխատանքները և այլն:

Կարևորագույն կիրառական հետազոտությունները խթանող հիմնարար գիտություններ

Հիմնարար գիտությունը հասարակության զարգացման կարևորագույն ռազմավարական բաղկացուցիչներից է: Գիտական առաջընթացը, բարձր տեխնոլոգիաների ստեղծումն ու օգտագործումը և առհասարակ հասարակության քաղաքակրթական մակարդակն անքակտելիորեն կապված են հիմնարար գիտությունների առաջընթացի հետ: Հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների և մշակումների արդյունքները հիմք են հանդիսանում երկրի տնտեսական աճի և կայուն զարգացման համար, համարվում են ժամանակակից աշխարհում Հայաստանի Հանրապետության տեղն ու դերը որոշող կարևորագույն գործոններ: Հիմնարար գիտությունը ապահովում է կրթության ողջ գործընթացը, հիմք է հանդիսանում կիրառական գիտության զարգացման համար, ապահովում է այն գիտական միջավայրը, որն ի գործ է իրականացնելու նոր տեխնոլոգիաների «տեղափոխումը» կիրառական հետազոտությունների հարթություն և նպաստում է հասարակության ընդհանուր մշակութային մակարդակի բարձրացմանը: Բացի այդ, հիմնարար գիտությունն ունի նաև հասարակության ընդհանուր մշակութային մակարդակը բարձրացնելու առաքելություն. հիմնարար գիտությամբ են որոշվում այն արժեքներն ու չափանիշները, որոնք նպատակակետ են, և որոնց ձգտում են հասնել մարդկային գործունեության մյուս բնագավառները:

Հիմնարար գիտությունները Հայաստանի Հանրապետությունում ունեն ձևավորված ավանդույթներ և կայացած ու միջազգային մակարդակին համապատասխանող գիտական դպրոցներ: Մասնավորապես, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության հայկական դպրոցներն արդարացիորեն համընդհանուր ճանաչում են ստացել աշխարհում, և պետք է արձանագրել՝ մինչև այսօր պահպանում են իրենց բարձր վարկանիշը: Ընդ որում, հիմնարար գիտությունների բնագավառն է, որտեղ հնարավոր եղավ պահպանել միջազգային չափանիշներին համապատասխանող գիտական ներուժ և ապահովել գիտական կադրերի վերարտադրություն: Արդյունքում՝ հիմնարար գիտությունների բնագավառում իրականացվող աշխատանքներ հրապարակվում են միջազգային ամենաբարձր վարկանիշ ունեցող գիտական պարբերականներում և իրավամբ համարվում են ազգային գիտության նշանակալի ձեռքբերումներ:

2. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՉԵՆ ՑԱՆԿՈՒՄ

Գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների ցանկը չի ենթադրում, որ գիտության այլ ուղղություններ պետական աջակցություն չեն ստանալու: Հայաստանի Հանրապետությունը չի կարող թույլ տալ «ոչնչացնել գիտության ցանկացած ուղղություն. դրանք բոլորը կարևոր են ինչպես նոր գիտելիքի ձեռքբերման և կուտակման, այնպես էլ ուսումնական նպատակների ու հասարակության ընդհանուր կրթական մակարդակի բարձրացման տեսանկյունից: Գիտական հետազոտությունների համակարգի միասնականությունն ունի վճռորոշ նշանակություն, և այդ պատճառով է, որ բոլոր գիտական հետազոտությունները, նախագծերը, իրականացվող ու իրականացված ծրագրերն ու թեմաները, ինչպես նաև գիտնականների, գիտահետազոտական խմբերի, լաբորատորիաների ու կազմակերպությունների գիտական գործունեության արդյունավետությունը գնահատվելու է միևնույն չափանիշներով՝ անկախ նրանից՝ հետազոտության բնագավառը ընդգրկված է գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների ցանկում, թե՛ ոչ: Բացի դրանից, ամբողջ գիտական ենթակառուցվածքը պետք է հավասարապես մատչելի լինի բոլոր հետազոտողների համար:

3. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

ԱՄՆ	Առաջանցիկ պաշտպանական համակարգ, Առողջապահություն, Գյուղատնտեսություն, Էներգետիկա, Տիեզերքի հետազոտություն և շահագործում, Հիմնարար հետազոտություններ
ԵՄ	Առողջություն, Պարեն, Գյուղատնտեսություն, Ձկնորսություն, Կենսատեխնոլոգիա, Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, Նանոգիտություններ, Նանոտեխնոլոգիաներ, Նյութեր և նոր արտադրական տեխնոլոգիաներ, Էներգետիկա, Շրջակա միջավայր, Տրանսպորտ, Սոցիալ-տնտեսագիտական և հումանիտար գիտություններ, Տիեզերք, Պաշտպանություն
Ֆրանսիա	Գիտություններ կյանքի մասին, Կենսատեխնոլոգիա և առողջություն, Էներգետիկա, Պաշտպանություն, Սոցիալ-տնտեսագիտական և հումանիտար գիտություններ, Շրջակա միջավայր, Երկրի և Տիեզերքի ուսումնասիրություններ
Կանադա	Շրջակա միջավայրի գիտություններ և տեխնոլոգիաներ, Բնական ռեսուրսներ և էներգետիկա, Առողջություն և դրա հետ կապված կյանքի մասին գիտություններ ու տեխնոլոգիաներ, Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ
Ռուսաստանի Դաշնություն	Անվտանգություն և ահաբեկչության հակազդեցություն, Կենդանի համակարգեր, Նոնոհամակարգերի և նյութերի արդյունաբերություն, Տեղեկատվա-հաղորդակցական համակարգեր, Հեռանկարային զինամթերք և

	զինվորական ու հատուկ տեխնիկա, Ռաջիոնալ բնօգտագործում, Տրանսպորտային, ավիացիոն և տիեզերական համակարգեր, էներգետիկա և էներգախնայողություն
Բելառուսի Հանրապետություն	Մրցունակ արտադրանքի արտադրության ռեսուրսայինայող և էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ, Նոր նյութեր և էներգիայի նոր աղբյուրներ, Բժշկություն և դեղագործություն, Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներ, Գյուղմթերքների արտադրության, վերամշակման և պահպանման տեխնոլոգիաներ, Արդյունաբերական կենսատեխնոլոգիաներ, Բնապահպանություն և ռաջիոնալ բնօգտագործում

4. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների վերասահմանումը հնարավորություն կտա բարձրացնելու գիտական և գիտատեխնիկական գործունեության համար պետական բյուջեից հատկացվող միջոցների օգտագործման արդյունավետությունը և կնպաստի հանրապետության տնտեսության պահանջներից բխող հասցեագրված հետազոտությունների և մշակումների իրականացմանը: Բացի այդ, առանձնակի կկարևորվեն հանրապետության տեխնիկական անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված գիտական և գիտատեխնիկական հետազոտությունները:

Կարևորելով գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների վերասահմանման խնդիրը, ինչպես նաև հաշվի առնելով հանրապետությունում իրականացվող գիտական հետազոտությունների ու միջազգայնորեն հեռանկարային համարվող ուղղությունների համապատասխանեցման անհրաժեշտությունը՝ սույն որոշման նախագծի ընդունումը համարում ենք նպատակահարմար:

Արմեն Աշոտյան